# «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

## «ՎՐԱՍՏԱՆԸ» «ՄԵԾԱՆՈՒՄ Է» ՄԵՐ ԱՉՔԻ ԱՌԱՋ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իսկ այսօր, «Վրաստանը» արդեն նշում է իր մեկդարյա հոբելյանը: Համոզված եմ, որ թերթի այս մեկդարյա գործունեության մասին շատ է գրվել ու խոսվել, հիմնականում կատարվածի մասշտաբայնության, պատմական դերի ընկալման ու առաքելության լիարժեք կատարման տեսանկյունից: Ասվածին ու գրվածին կարող եմ ավելացնել, որ «Վրաստանին» արժանիորեն վերապահված է երկու եղբայրական ժողովուրդների՝ վրացիների ու հայերի բարեկամության մատենագրի պատվավոր կոչումը: Իսկ այսօր այդ կոչմանը, կարելի է անվերապահորեն ավելացնել նաեւ երկու անկախ, բարիդրացիական, նույնատիպ ճակատագրի պետությունների միջեւ հարաբերությունների ամրապնդման կամուրջի առաքելությունը:

Բնականաբար, թերթի կողմից կատարած, կատարվող եւ կատարելիք գործունեության «մեղքի» ամենամեծ բաժինն ընկնում է խմբագրակազմի, թերթի գլխավոր խմբագրի վրա: Իր գործի հմուտ մասնագետ, բառիս լայն իմաստով պրոֆեսիոնալ լրագրող Վան Բայբուրթյանը, իսկապես, կարողանում է հստակորեն կողմնորոշվել, առանձնապես վերջին 30 տարիներին տեղի ունեցող հակասական իրադարձությունների փոթորկուն ծովում, թերթի «առագաստը» պահելով այն քամուն համընթաց, որը կոչվում է ծառայություն քո երկրին, ծննդավայրին, մայր հայրենիքին, քո ժողովրդին:

Շնորհավոր հոբելյանդ, «Վրաստան», թող ուղեկից քամին միշտ ընթացք տա քո առագաստներին, որ ինչպես այս 100 տարիների ընթացքում, վաղն էլ՝ կարողանաս հստակ ճակատով նայել կատարածին ու կատարելիքին:

***ԳՈՒՐԱՄ ԳՈԳԻԱՇՎԻԼԻ***

***«Սաքարթվելոս ռեսպուբլիկա» թերթի պատասխանատու խմբագիր***

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, ՍԻՐԵԼԻ «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հանրահայտ փաստ է, որ «Վրաստանը» նշանակալի դեր է կատարել եւ հիմա էլ կատարում է վրաց հասարակության մեջ վիրահայության սահուն ինտեգրման, երկրի քաղաքական եւ հասարակական կյանքում ազգությամբ հայ քաղաքացիների ակտիվ մասնակցության ապահովման ուղղությամբ:

Հենց թերթի շնորհիվ է, որ վիրահայերս, մասնավորապես՝ Մառնեուլիի մունիցիպալիտետի հայազգի բնակիչներս, լիարժեք տեղեկություն ենք ստանում երկրում տեղի ունեցող դեպքերի, վիրահայության կյանքում նշանակալի իրադարձությունների, ձեռքբերումների եւ, իհարկե, մեր բնակիչներին հուզող հիմնախնդիրների մասին: Հպարտանում ենք, երբ թերթի էջերում հոդվածներ են լինում մեր համագյուղացիների, նրանց ձեռքբերումների ու նվաճումների մասին: Դա յուրատեսակ ազդակ է, որ մեր մարդկանց գործերը չեն անտեսվում, դրանց մասին գիտեն ոչ միայն Վրաստանում, այլեւ Հայաստանում: Մեկ անգամ չէ, որ մառնեուլցիներս այս կամ այն հարցով դիմել ենք թերթի խմբագրությանը եւ չեմ հիշում դեպք, որ նման դիմումներն անտեսության մատնվեն:

Վիթխարի է թերթի դերը նաեւ վրաց-հայկական միջպետական հարաբերությունների զարգացման գործում: Իզուր չէ, որ թե' վրաց եւ թե' հայ նշանավոր գործիչները «Վրաստանն» արժանիորեն համարում են վրաց-հայկական միջպետական, ազգամիջյան բարեկամական հարաբերություններն ամրացնող կամուրջ, որը արտակարգ պատասխանատվությամբ է իրականացնում իր այդ պատմական առաքելությունը:

Անձամբ իմ անունից կարող եմ ասել, որ որքան ինձ հիշում եմ, «Վրաստանը» եղել է մեր ընտանիքի անբաժանելի ուղեկիցը, խորհրդատուն, բարեկամը: Հիշում եմ՝ ինչ անհամբերությամբ էին մերոնք սպասում թերթի հերթական համարին, ինչպես էին քննարկում այս կամ այն հոդվածը: Շնորհակալություն, սիրելի «վրաստանցիներ», այդ բարի հիշողությունների համար, երկարակեցություն մեր «Վրաստանին» եւ ստեղծագործական առաջընթաց:

***ԱՐՍԵՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ***

***Խոժոռնիի վարչական միավորից Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ՄԵՐ ԹԲԻԼԻՍՑԻՆ ԲՈԼԻՎՈՒԴՈՒՄ, ՈՎ ՇՐՋՈՒՄ Է 10 ԹԻԿՆԱՊԱՀԻ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՄԲ

***Այն, որ Թբիլիսիում նկարահանվում է բոլիվուդյան ֆիլմ, քչերը գիտեն: Մեծամասնությունը տեղյակ չէ նաեւ նրանից, որ նկարահանումներին մասնակցում է մեր համաքաղաքացի Դավիթ Մանուչարովը, ով արդեն ութերորդ տարին է, ինչ նկարահանվում է հնդկական ֆիլմերում եւ այդ ժամանակահատվածում բավական հանրահայտ է դարձել:***

***Օգտվելով Դավիթ Մանուչարովի՝ Թբիլիսիում գտնվելու առիթից, «Վրաստան» թերթի եւ «Ալիք մեդիայի» լրագրողները նրան հարցազրույցի հրավիրեցին Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոն:***

***Ձեր ուշադրությանն են ներկայացնում բոլիվուդյան աստղի համբավ ձեռքբերած Դավիթ Մանուչարովի հետ հարցազրույցը:***



Դավիթ Մանուչարովը «Թումանյանի տանը»

- Երեսունութ տարեկան եմ, ծնվել եմ Թբիլիսիում, իմ թբիլիսցի նախնիների վեցերորդ սերունդն եմ, երեխաներս՝ արդեն 7-րդը: Ավարտել եմ Թբիլիսիի թիվ 64 ռուսական դպրոցը: Վրացերենին լավ եմ տիրապետում, ցավոք, մայրենի հայերենին ոչ այնքան: Թեեւ Հայաստանում, ասում են, թե բա Դավիթ, քո հայերենը՝ համով թիֆլիսյան հայերենն է: Այնպես որ, հանգիստ արտահայտվում եմ վրացերեն, ռուսերեն, անգլերեն:



Բոլիվուդ. Դավիթ Մանուչարովը նկարահանումների ժամանակ

Ինչ վերաբերում է մասնագիտությանս, ապա ողջ կյանքում զբաղվել եմ էքստրեմալ մարզաձեւերով՝ ավտոռալլի, մոտովազք, ռեգբի, բռնցքամարտ... Բավական լավ կրթություն ունեմ՝ դպրոցն ավարտել եմ ոսկե մեդալով, սովորել եմ Թբիլիսիի պետհամալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում, ունեմ երկու բարձրագույնի կարմիր դիպլոմներ՝ վրացերեն եւ անգլերեն:

- ***Բացի ամեն ինչից, 1999 թվականին Դուք մասնակցել եք Համահայկական խաղերին Թբիլիսիի բասկետբոլի թիմի հետ:***

- Դա պատահաբար ստացվեց: Հարկ էր շտապ հավաքել թիմ եւ մեկնել Երեւան: Մասնակցեցինք երեք մրցաշարերի, եզրափակիչ չհասանք, բայց բրոնզե մեդալ վաստակեցինք: Այսօր առանձնակի շնորհակալություն եմ հայտնում այն ժամանակվա մեր մարզիչ, ժամանակին Թբիլիսիի «Դինամոյի» հիմնական կազմի խաղացող Ալիկ Ղազանչյանին, ով կարողացավ միավորել, թիմ կազմել: Համահայկական խաղերին մասնակցությունը իմ կյանքի փուլերից մեկն էր՝ հագեցած հետաքրքիր ուղեւորություններով ու տպավորություններով...

- ***Ուրիշ ի՞նչ մարզաձեւով եք զբաղվել:***

- Ռեգբիով, խաղացել եմ Վրաստանի առաջնության բարձրագույն լիգայում: Կարճ ժամանակով ընդգրկվեցի նույնիսկ Վրաստանի հավաքական: Ընդհանուր առմամբ, 12 տարի զբաղվեցի ռեգբի մարզաձեւով, խաղացել եմ Լեհաստանի, Իտալիայի, Գերմանիայի եւ Բրազիլիայի ակումբային տարբեր թիմերում: Ինչեւէ, չէի ասի, որ այդ մարզաձեւի լեգենդը դարձա: Բայց բավական հաջող մարզական ուղի անցա: Մարզական կյանքով պայմանավորված ոճը մինչ օրս օգնում է ինձ:

- ***Բավական ձեռքբերումներ ունեք նաեւ կինոյում:***

- Ինչ վերաբերում է կինեմատոգրաֆիային, ապա հարցը կարծես ինքնին կարգավորվեց: Կինոյով հրապուրվեցի պատահական, մի քանի տարի առաջ: Այդ տարիներին, հավանաբար, հիշում եք լույս չկար, ջուր չկար... մյուսների նման ես էլ աշխատանք էի փնտրում՝ ֆինանսական լուրջ խնդիրներից դրդված: Այն ժամանակ տեղեկացա, որ նախագծերից մեկում աշխատողներ են պահանջվում: Ներկայացա: Պատրաստ էի ցանկացած աշխատանքի, միայն թե ընդունեին: Հավակնորդները շատ էին, ինձ առաջարկեցին աշխատանք, որը մեծ ցանկության դեպքում անգամ չէի կարողանա կատարել: Բնականաբար, հրաժարվեցի, սենյակից դուրս եկա խիստ մտահոգ, վառեցի ծխախոտս, այդ պահին մոտեցավ մի աղջիկ եւ ասաց, որ ներս մտնեմ կողքի սենյակ, որտեղ հատուկ Հնդկաստանից ժամանած կինոգործիչները քասթինգ էին անցկացնում: Մտա սենյակ: Նստած էին ռեժիսորներ, օպերատորներ, մի խոսքով, մարդիկ, ովքեր նկարահանումների համար կերպարներ էին ընտրում: Նոր էի ոտք դրել սենյակ, երբ բոլորը, անսպասելի ոտքի ելան ու սկսեցին ծափահարել: Զարմացա, հարցրի, ի՞նչ պատահեց, ասացին, որ ներկայացված սցենարի համար իմ կերպարը իդեալական է: Այսպես սկսվեց բոլիվուդյան իմ ուղին ու հետագա հանրաճանաչությունը: Ֆիլմը նկարահանվում էր իրական իրադարձությունների հիման վրա եւ ներկայացվել էր անվանակարգման ինչպես ԱՄՆ-ի Հոլիվուդում, այնպես էլ՝ Հնդկաստանի Բոլիվուդում: Ներկայացված մի քանի անվանակարգերում ստացանք յոթ, թե ութ մրցանակ: Անձամբ ես ոչինչ չստացա, քանի որ կենտրոնական դերում չէի խաղում:

- ***Եվ որքան գիտենք, այսօր կինոյում Ձեր գործունեությունը մեծ հաջողություններ ունի: Բոլիվուդյան ուղին շարունակվում է եւ դեռ ավելին՝ այսօր արդեն հանդես եք գալիս կենտրոնական դերերում:***

- Այո, ասեմ, որ կինոյում ծրագրված նախագծերը շատ էին... Սակայն, հենց այդ ժամանակ հայտարարվեց համընդհանուր «COVID-19»-ի լոգդաունը: Որոշ նախագծեր կանգնեցվեցին, դրանք կվերսկսվեն մոտ ժամանակներս: Իսկ մինչ այդ, ահա մեկ ամիս է, ինչ Թբիլիսիում աշխատում ենք կիսապատմական, բյուջետային ֆիլմի նկարահանման վրա: Սկզբունքորեն, նկարահանումները պետք է ավարտենք հուլիսի վերջերին: Հավանաբար, մոտ օրերս կմեկնեմ Հնդկաստան, քանի որ այս ֆիլմի նկարահանումն ավարտելուց անմիջապես հետո, սկսելու ենք աշխատել նոր ֆիլմի ուղղությամբ: Ծրագված է եւս չորս ֆիլմի նկարահանում:

- ***Ասում են, որ բոլոր ֆիլմերում հնարքների (տրյուկների) կատարման ժամանակ Դուք «դուբլյոր» չունեք:***

- Այո, նկարահանումների ժամանակ գրեթե բոլոր հնարքները ինքս եմ կատարում, կասկադյորների ծառայությունից գրեթե չեմ օգտվում, իսկ դրա համար հարկ է միշտ լինել լավ մարզավիճակում: Խոստովանեմ, որ բոլոր հնարքներից ամենադժվարն ինձ համար նժույգի հետ կապված հնարքներն են:

Իրոք, առաջին ֆիլմի ցուցադրումից հետո ձեռք բերեցի որոշակի հանրաճանաչություն: Սակայն, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Հնդկաստանում այլ մասշտաբներ են, ուստի հանրաճանաչությունն էլ հարաբերական է: Իրոք, փողոցներում մարդիկ ճանաչում են, ողջունում, ինքնագրեր խնդրում, սակայն դա ինքնաբավության առիթ չպետք է դառնա: Թեեւ, ինչ խոսք, դա հաճելի է: Իմ վերջին ֆիլմը Հնդկաստանում դիտել է 180 միլիոնից ավելի մարդ: Երկրպագուներից այսպես ասած ապահովագրվելու համար փողոցներում շրջում եմ թիկնապահների ուղեկցությամբ, քանի որ հնդիկ երկրպագուները սովորություն ունեն իրենց կուռքերից, օրինակ՝ մազի, հագուստի կտոր պոկել՝ իբրեւ հիշատակ:

- ***Հոգնո՞ւմ եք:***

- Իհարկե, ֆիլմի նկարահանումների ժամանակ առավոտյան արթնանում եմ ժամը 4-ին, ժամը 5-ին իմ ետեւից գալիս է ավտոմեքենա: Ժամուկեսից նկարահանման հրապարակում եմ, դիմահարդարված, զգեստավորված. մի խոսքով՝ պատրաստ նկարահանման: Հյուրանոց եմ վերադառնում երեկոյան, հաջորդ օրը ամեն ինչ կրկնվում է: Վերջին նկարահանումները տեւեցին 38 օր, պատկերացնո՞ւմ եք, նման ռեժիմով աշխատել 38 օր եւ միայն երկու օր հանգստանալ: Նկարահանումներն անց էին կացվում Դելիում եւ Ռաջեստանում:

- ***Եթե Հնդկաստանում Ձեզ հաջողվի ունենալ 3-4 ազատ օր, կփորձե՞ք հանդիպել այդ երկրում բնակվող հայ ու վրացի համայնքի ներկայացուցիչների հետ:***

- Ես ապրում եմ Հայդարաբադ քաղաքում, նրա քրիստոնեական թաղամասում: Այդ քաղաքում ապրում է շուրջ 15 միլիոն մարդ: Հիշում եմ այնտեղի 14-րդ դարի եկեղեցին, շատ գեղեցիկ է: Երբեմն կատակով ասում եմ իմ ծանոթ հնդիկներին. այս մեծ քաղաքը, որի բնակիչների թիվը հասնում է 15 միլիոնի, ժամանակին մեր հայերը հո՞ չեն հիմնել *(ծիծաղում է)*, չէ՞ որ հայերի խոսակցական լեզուն պաշտոնապես գրանցված է հնդեվրոպական խմբում ու չի բացառվում, որ Հայ-դարաբադն էլ մեր՝ հայերի հիմնածն է...

- ***Դավիթ, եթե գնաք Կալկաթա, որը գտնվում է Հայդարաբադից 1200 կմ հեռավորությամբ, մի խնդրանք մեր թերթի եւ «Ալիք մեդիայի» կողմից՝ այցելեք Ջանդաբա քաղաքը, եւ մեզ համար լուսաբանեք, թե ինչո՞ւ հինավուրց Մետաքսե ուղին Եվրոպայից մինչեւ Հնդկաստանի վերջին կետը՝ Չինաստանի սահմանի մոտ գտնվող քաղաքը կրում է Ջանդաբա անունը:***

- Չգիտեի, խոստանում եմ, անպայման լինել ե'ւ Կալկաթայում, ե'ւ Ջանդաբայում: Չէ՞ որ մենք եւ վրացիներս լավ գիտենք մեր ժողովուրդների կողմից կիրառվող արտահայտությունը՝ ջանդաբա գնաս: Հիշում եմ, երբ ուշանում էի, տատս ասում էր՝ էս ո՞ր ջանդաբայում էիր, որ ըսենց ուշացար: Գիտեմ, որ Կալկաթայում գործում է հայկական եկեղեցի, կա փոքր հայկական համայնք, կգնամ ե'ւ Կալկաթա, ե'ւ Ջանդաբա, ու երբ նորից կլինեմ Թբիլիսիում, կրկին կհանդիպենք ու զրուցելու նոր թեմա կունենանք:

***Զրույցը վարեցին***

***ԱՆՆԱ ՊԵՉԵՆԵՎՍԿԱՅԱՆ ԵՎ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆԸ***

COVID - 19

# ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՊԱՐԵՏԱՅԻՆ ԺԱՄԸ ՉԵՂԱՐԿՎՈՒՄ Է

## ԻՍԿ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՑ ԲԱՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼՆ ԱՅԼԵՎՍ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ, ԱՅՆՈՒՀԱՆԴԵՐՁ, ԴՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱՆԱ, ԵԹԵ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՈՆԵ 30 ՏՈԿՈՍԸ ՊԱՏՎԱՍՏՎԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Բաց տարածքներում պաշտպանիչ դիմակ կրելը այլեւս պարտադիր չի լինի: Պաշտպանիչ դիմակ կրելու սահմանափակումն ու հանձնարարականը մնում են ուժի մեջ, նրանք, ովքեր ցանկանում են, կարող են կրել պաշտպանիչ դիմակ, իսկ փակ տարածքներում, հասարակական տրանսպորտում եւ տրանսպորտի կանգառներում այն կրելը պարտադիր է,- նշեց վարչապետը:

Այդուհանդերձ, մինչեւ երկրի բնակչության 30 տոկոսը չպատվաստվի, դիմակներն անպայման պետք է օգտագործվեն:

Հիշեցնենք, որ տեղաշարժի արգելքն ուժի մեջ էր մտել 2020 թվականի նոյեմբերի 28-ից: Ժամը 21:00-ից 05:00-ն արգելված էր ինչպես հետիոտն, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցով տեղաշարժը: 2021 թվականի հունիսի 1-ից սահմանափակման ժամկետը կրճատվել էր ժամը 23-ից մինչեւ առավոտյան 4-ը:

Հունիսի 22-ին միջգերատեսչական համակարգող խորհրդի օպերատիվ շտաբի պետ Գիորգի Ղիբրաձեն հայտարարեց, որ համակարգող խորհրդի որոշմամբ, ռեստորանները բաց կլինեն մինչեւ երեկոյան ժամը 12:00-ը:

Ըստ նրա, այս սահմանափակումը վերաբերում է նաեւ հյուրանոցների ռեստորաններին ու ժամանցի հաստատություններին:

- Ռեստորանների նկատմամբ սահմանափակումները շարունակում են ուժի մեջ մնալ: Ռեստորանները բաց կլինեն միայն մինչեւ երեկոյան 12:00-ը: Այս ժամանակից հետո ռեստորանները չեն աշխատի, նույնը վերաբերում է նաեւ ժամանցի այլ հաստատություններին, իհարկե, նաեւ՝ գիշերային ակումբներին: Բացի այդ, այս սահմանափակումը վերաբերում է նաեւ հյուրանոցների ռեստորաններին,- ասաց Գիորգի Ղիբրաձեն:

# ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱՊԱՀՎՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

*Հունիսի 23-ին Վրաստանի խորհրդարանը երկարաձգեց սահմանափակումներ մտցնելու կառավարության իրավունքը: Հարցին կողմ է քվեարկել 78 պատգամավոր, դեմ՝ 22-ը: Փոփոխությունների փաթեթի համաձայն, կառավարությունը երկրում, առանց արտակարգ դրություն սահմանելու, կարող է որոշ սահմանափակումներ մտցնել:*

Կառավարությանը տրված միանձնյա սահմանափակումներ մտցնելու իրավունքը երկարաձգվում է արդեն երկրորդ անգամ: Նշված իրավունքը խորհրդարանը կառավարությանը շնորհել էր 2020 թվականի մայիսի վերջին: 2020-ի դեկտեմբերին մանդատը երկարաձգվեց եւս 6 ամսով, որն ավարտվում է հուլիսի 1-ին:

Օրենքը, որն ընդունվել է 2020 թվականի մայիսին, կառավարությանը իրավունք է տալիս կարանտինային միջոցներ կիրառել հանրային առողջության անվտանգության նկատառումներից ելնելով՝ առանց խորհրդարանի համաձայնության, ինչը հանգեցնում է մի շարք սահմանադրական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումների, ներառյալ՝ հավաքների ազատությունը, տեղաշարժի, սեփականության, տնտեսական ազատությունը եւ սոցիալական իրավունքները:

Խորհրդարանի տվյալ որոշումն արժանացել է քննադատությունների մի շարք հեղինակավոր հասարակական կազմակերպությունների եւ ընդդիմության կողմից, քանի որ այն համարվել է հակասահմանադրական:

# ՀՈՒԼԻՍԻՑ ԿԸՆԴԼԱՅՆՎԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ



*Համակարգող խորհուրդը վերանայեց պատվաստումների ծրագրի ընդլայնման գործառնական պլանը: Ինչպես նիստի ավարտից հետո նշեց առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան, հուլիս ամսից պատվաստումների ծրագիրը կընդլայնվի ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ մարզերում այն դոզանների հաշվին, որոնք երկիրն ակնկալում է ստանալ ամռանը եւ դրանից հետո:*

Նրա խոսքով, պատվաստանյութերի մոբիլիզացմանը զուգահեռ, կարեւոր է պատվաստումների համար տեղեր ստեղծել եւ բժշկական հաստատությունների ավելի շատ բրիգադներ ավելացնել:

- Ամենակարեւորը, պատվաստումների համար տեղեր ստեղծելն ու բժշկական հաստատությունների բրիգադների ավելացումն է: Ինչպես նաեւ հասարակական վայրերում պատվաստումների կենտրոններ կազմակերպելը,- ասաց Թամար Գաբունիան:

Անդրադառնալով պատվաստումն անցած քաղաքացիների խրախուսման թեմային՝ փոխնախարարը նշեց, որ խրախուսական միջոցառումները կքննարկվեն:

- Մենք քննարկում ենք նաեւ պարտադիր թեստավորման փոփոխությունը, պարտադիր թեստավորման ռեժիմն աստիճանաբար կփոխարինվի պատվաստման գործընթացով, եւ պատվաստված անձը այլեւս կարիք չի ունենա մասնակցել պարտադիր թեստավորման: Բիզնեսի հետ համագործակցության հնարավորություններ, որոշակի զեղչերի փաթեթ գործարկել նրանց համար, ովքեր կունենան, այսպես կոչված, «կանաչ անցաթուղթ»: Աշխատանքներ են տարվում տեղեկատվական համակարգի ընդլայնման ուղղությամբ: Վերջերս տեղեկատվական համակարգն ունեցել է որոշ նյութատեխնիկական թերություններ, ուստի գերատեսչությունների մի քանի խմբեր ակտիվ աշխատում են, որպեսզի ծանրաբեռնվածության պայմաններում նման խնդիրներ չստեղծվեն,- ասաց Թամար Գաբունիան:

# ԵՐԿՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՐՏԵՂԻՑ ԿԱՐԵԼԻ Է ՎՐԱՍՏԱՆ ԳԱԼ ԱՌԱՆՑ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ

*Վրաստանի կառավարությունն ընդլայնել է այն երկրների ցանկը, որոնց քաղաքացիները կարող են Վրաստան գալ՝ առանց պատվաստման՝ միայն բացասական «PCR» թեստի պատասխանով:*

Նոր ցանկում են Սան Մարինոն, Մոնակոն, Սերբիան, Իսլանդիան, Լիխտենշտայնը, Չեռնոգորիան, Անդորրան, Հյուսիսային Մակեդոնիան եւ Բոսնիա ու Հերցեգովինան:

Այս երկրների քաղաքացիները, ինչպես նաեւ կացության թույլտվություն ունեցողները կարող են մուտք գործել Վրաստան ոչ շուտ, քան մուտքից 72 ժամ առաջ արված «PCR» թեստի բացասական պատասխանով: Այս դեպքում պարտադիր կլինի երկրորդ «PCR» թեստը՝ ժամանելուց հետո երրորդ օրը (իրենց հաշվին): Ավելի վաղ նույն կարգն էր հաստատվել հետեւյալ երկրների նկատմամբ. ԵՄ երկրներ, Իսրայել, Թուրքիա, Շվեյցարիա, Նորվեգիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա եւ Հյուսիսային Իռլանդիա, Միացյալ Թագավորություն, Սաուդյան Արաբիա, Քաթար, ՄԱԷ, Բահրեյն, Հայաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Ղազախստան, Ռուսաստան, Բելառուս, Ուզբեկստան, Տաջիկստան, Ղրղզստան, Թուրքմենստան, Կանադա, Ճապոնիա, Քուվեյթ, Չինաստան, Հարավային Կորեա, Օման եւ Մոլդովա:

COVID-19-ի դեմ պատվաստված բոլոր օտարերկրացիները կարող են գալ Վրաստան՝ բացառությամբ նրանց, որոնք վերջին երկու շաբաթվա ընթացքում այցելել են Հնդկաստան:

Բոլոր օտարերկրյա այցելուները Վրաստան մուտք գործելիս պետք է իրենց մոտ ունենան բժշկական ապահովագրություն, որը, անհրաժեշտության դեպքում, կծածկի կորոնավիրուսային վարակի բուժման ծախսերը:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԾ 180 ՄԻԼԻՈՆԸ

*COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 180 808 123-ից: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 3 917 111-ը: Ապաքինվել է 165 միլիոն 449 հազար 865 մարդ:*




Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **34 464 956** դեպք: Այստեղ մահացածների թիվը **618 685** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **30 134 445**-ի, մահացածներինը՝ **393 338**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **18 243 483**, մահացել՝ **509 282** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **5 764 329**, վարակի հետեւանքով մահացել՝ **110 906** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Արգենտինան, Իտալիան ու Կոլումբիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **224 635-ի**, մահացածներինը՝ **4 505-ի**, ապաքինվածներինը՝ **216 423**-ի:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **335 676** մարդ: Վարակից մահացել է **4 965,** ապաքինվել՝ **329 870** մարդ:

**Վրաստանում,** վերջին տվյալներով, վարակվել է **362 183,** մահացել՝ **5 237,** ապաքինվել՝ **348 267** մարդ:

*Հունիսի 25-ին կորոնավիրուսով վարակման **699** նոր դեպքերից **418-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 36, Իմերեթիում՝ 57, Քվեմո Քարթլիում՝ 51, Շիդա Քարթլիում՝ 36, Գուրիայում՝ 2, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 32, Կախեթիում՝ 41, Մցխեթա-Մթիանեթիում՝ 12, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 3, Սամցխե-Ջավախեթիում՝ 11:***

# ԱՐԴԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ԳՐԵԹԵ ՔԱՌՈՐԴ ՄԻԼԻՈՆ ՔԱՂԱՔԱՑԻ




*Հունիսի 23-ի դրությամբ, Վրաստանում կորոնավիրուսի դեմ ընդհանուր հաշվով իրականացվել է 242 451 պատվաստում: Ամբողջական պատվաստում (երկու դեղաբաժին) ստացել է 87 131 քաղաքացի: Վերջին մեկ օրվա ընթացքում իրականացվել է 3957 պատվաստում:*

Հիշեցնենք, որ Վրաստանում պատվաստման գործընթացը մեկնարկեց մարտի 15-ից՝ միայն բժշկական ոլորտի աշխատողների համար: Ավելի ուշ, պատվաստվողների խումբն ընդլայնվեց եւ պատվաստվել սկսեցին նաեւ 65 տարեկանից բարձր քաղաքացիները: Այժմ «AstraZeneca» տեսակի պատվաստանյութով պատվաստվելու համար կարող են գրանցվել 45 տարեկանից բարձր քաղաքացիները:

18 տարեկանից բարձր քաղաքացիների պատվաստումն ընթանում է չինական «Sinopharm» տեսակի պատվաստանյութով: Մայիսի 24-ից 18 տարեկանից բարձր քաղաքացիները պատվաստվում են «Sinovac» տեսակի պատվաստանյութով:

Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի հայտարարությամբ, այսուհետ, բացի «AstraZeneca» տեսակի պատվաստանյութից, Վրաստան ներմուծված բոլոր տեսակի պատվաստանյութերով կարող են պատվաստվել 18 տարեկանից բարձր քաղաքացիները:

Վրաստանը հուլիսից նախատեսում է սկսել բնակչության զանգվածային պատվաստում: Մասնագետների խոսքով, հուլիսին հնարավոր կլինի Վրաստանի խոշոր քաղաքների սպորտային հաստատություններում, առեւտրի կենտրոններում եւ այլ մեծ տարածքներում պատվաստվել՝ առանց նախապես գրանցման:

# ԹԵՆԳԻԶ ՑԵՐՑՎԱՁԵ. «ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ՓԱՍՏԱՑԻ ՉԻ ԼԻՆԻ»

*Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Թենգիզ Ցերցվաձեի կանխատեսումներով, տարեվերջին պանդեմիա փաստացի չի լինի:*



- Տարեվերջին երկրում վարակի եզակի դեպքեր կլինեն: Փոքր քանակությամբ վարակվածներ կլինեն, նույնիսկ՝ 100 տոկոս պատվաստման դեպքում,- գտնում է մասնագետը: Սակայն կլինիկական հատվածն այնքան լավ է կարողանալու հաղթահարել դա, որ բնակչությունը չի զգալու, մարդիկ վերադառնալու են կյանքի բնականոն հուն: Տնտեսական աճը, որ գրանցվել է մայիսին (44%), ավելի ու ավելի է բարելավվելու: Վարակաբանը լավատես է՝ տարեվերջին Վրաստանի բնակչությունը վերադառնալու է նախկին կյանք:

*Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ» ՀԱՄՈԶԻՉ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ

### ՓԱՇԻՆՅԱՆԻ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ» ԿՈՒՆԵՆԱ 71 ՄԱՆԴԱՏ, ՔՈՉԱՐՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԸ՝ 29, ԻՍԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԴԱՇԻՆՔԸ՝ 7 ՄԱՆԴԱՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ազգային ժողով մտնելու համար կուսակցությունները պետք է հաղթահարեն հինգ տոկոսանոց, իսկ դաշինքները՝ յոթ տոկոսանոց շեմը: Այսպիսով, օրենսդիր մարմնում ներկայացված են լինելու երեք քաղաքական ուժեր՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Հայաստան» դաշինքը եւ «Պատիվ ունեմ» դաշինքը:

Արտահերթ խորհրդարանական ընտրությունների ներկա արդյունքների համաձայն, ստացված մանդատները բաշխվել են հետեւյալ կերպ. «Քաղաքացիական պայմանագիր»՝ 71 տեղ, «Հայաստան» դաշինք՝ 29 տեղ, «Պատիվ ունեմ» դաշինք՝ 7 տեղ:

2021 թվականի ապրիլին, ընտրական համակարգի փոփոխություններից հետո, խորհրդարանի անդամներն ընտրվում են միայն համամասնական ընտրակարգի մեթոդով:

Օրենսդիր մարմնի չորս մանդատները անպայման վերապահված են ազգային փոքրամասնություններին՝ պայմանով, որ դրանք ներառվեն որեւէ կուսակցության ցուցակում: Ըստ այդմ, այս չորս մանդատներից երեքը բաժին կհասնի «Քաղաքացիական պայմանագրի» ցուցակում ընդգրկված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, իսկ մեկը՝ «Հայաստան» դաշինքի ցուցակում ընդգրկված ներկայացուցչին:

*Արտահերթ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագրի» համոզիչ հաղթանակի առթիվ Նիկոլ Փաշինյանին շնորհավորել են Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, պաշտոնատար այլ անձինք:*

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ



***Հունիսի 21-ին Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում հարգանքի տուրք մատուցեց Արցախյան պատերազմների հերոսների հիշատակին:***

***Նա ծաղիկներ խոնարհեց զոհվածների շիրիմներին եւ բոլորի առջեւ ծնկի իջավ: Նիկոլ Փաշինյանը ծաղիկներ խոնարհեց նաեւ սպարապետ Վազգեն Սարգսյանի, զորավար Անդրանիկ Օզանյանի շիրմաքարերի, ինչպես նաեւ ծաղկեպսակ դրեց զոհված հերոսների հուշահամալիրի մոտ:***

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՄԱՐԴԻԿ ՄԵԶ ՏՎԵՑԻՆ ՊՈՂՊԱՏԵ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

### «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ» ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿՁԵՎԱԿԵՐՊԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

***Նիկոլ Փաշինյանն ընտրություններում հաղթանակն անվանեց «պողպատե հեղափոխություն» եւ ասաց, որ դա իրեն հնարավորություն կտա երկրում հաստատել «օրենքի բռնապետություն»:***



Նիկոլ Փաշինյանն արդեն սկսել է, իր իսկ խոսքով խորհրդակցություններ քաղաքական ուժերի հետ, որպեսզի իմանա նրանց տեսակետները քաղաքական կյանքի համախմբման եւ հասարակական ներուժի վերաբերյալ:

- Հայաստանի ժողովուրդը մեզ ու քաղաքացիական պայմանագրին լիազորություն է տվել կառավարել երկիրը: 2018-ին մենք կատարեցինք թավշյա հեղափոխությունը, եւ այժմ մարդիկ մեզ տվել են պողպատե լիազորություն, ինչը նշանակում է, որ մենք անում ենք «պողպատե հեղափոխություն»,- հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանի վարչապետի պաշտոնակատարը նաեւ նշեց, որ նորընտիր խորհրդարանում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը կունենա սահմանադրական մեծամասնություն եւ կկարողանա ինքնուրույն ձեւավորել գործադիր իշխանությունը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ



***Հունիսի 21-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպում ունեցավ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրեն Մատեո Մեկաչի եւ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղար Ռոբերտո Մոնտելայի հետ, ովքեր դիտորդական առաքելություն են իրականացրել Հայաստանի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընթացքում:***

Հանդիպմանը հյուրերն Արմեն Սարգսյանին տեղեկություններ ներկայացրին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի, ԵԱՀԿ ԽՎ-ի եւ ԵԽԽՎ-ի համատեղ դիտորդական առաքելության ընթացքում կատարված աշխատանքների, ընտրական գործընթացի վերաբերյալ իրենց դիտարկումների մասին, ինչպես նաեւ փոխանցեցին պատրաստված զեկույցի ամբողջական տարբերակը:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին Հայաստանում ժողովրդավարական արժեքների եւ ինստիտուտների ամրապնդման կարեւորության, ինչպես նաեւ Հայաստանի հետ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի եւ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի համագործակցության մասին: Անդրադարձ կատարվեց մասնավորապես նախագահական ինստիտուտի հետ փոխգործակցությանը:

## ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՔԱՅԼ ԴԵՊԻ ՏՈՒՆ 2021» ՈՒՍՈՒՄՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

### ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ԹԲԻԼԻՍԻԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հունիսի 21-ին մեկնարկած «Քայլ դեպի տուն 2021» ուսումնաճանաչողական երկշաբաթյա ծրագրի շրջանակում, որի նպատակն է՝ պահպանել եւ զարգացնել 13-18 տարեկան սփյուռքահայ պատանիների ազգային ինքնությունը, Հայաստանում կհյուրընկալվի 400 սփյուռքահայ պատանի:

«Ծրագիրը եւս 3 փուլով կշարունակվի մինչ օգոստոսի կես՝ 400 սփյուռքահայ երեխաների հնարավորություն ընձեռելով տեսնել Հայաստանի տեսարժան վայրերը, անցնել հայերենի եւ պատմաճանաչողության դասընթացներ, սովորել հայկական երգ ու պար, մասնակցել տարաբնույթ հանդիպումների եւ ծանոթանալ հայրենիքի կրթական հնարավորություններին:

Ծրագրի առաջին փուլին մասնակցում են սփյուռքահայ պատանիներ Վրաստանից, ԱՄՆ-ից, Լիբանանից, Իսպանիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Իրանից եւ Ուկրաինայից: Գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը ողջունեց եւ բարի գալուստ մաղթեց նրանց՝ նշելով, որ մեկ տարի ընդմիջումից հետո հայրենիքը կարոտել էր սփյուռքի երեխաներին, նրանց ջերմությունն ու ժպիտները:

Ծրագրի 14-օրյա ժամանակահատվածի բոլոր ծախսերը հոգում է ՀՀ կառավարությունը»,- ասված է հաղորդագրության մեջ:

## «SPUTNIK V»-Ի ՆՈՐ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

***Հայաստան է ներկրվել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ «Sputnik V» պատվաստանյութի նոր խմբաքանակ:***

Հայաստանի առողջապահության նախարարության հայտարարությամբ, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակային իրավիճակի կայունացման նպատակով շարունակվում է պատվաստանյութերի նոր խմբաքանակների ձեռքբերումն ու ներկրումը: Հայաստան է ներկրվել ռուսական «Sputnik V» պատվաստանյութի նոր խմբաքանակ՝ 30000 անձի համար (30000 առաջին բաղադրիչ, 30000 երկրորդ բաղադրիչ):

Նախարարության տեղեկատվությամբ, COVID-19-ի դեմ պատվաստումները շարունակվում են Հայաստանի ամբողջ տարածքում:

Նախարարությունից հայտնում են, որ «Sputnik V»-ով պատվաստումները նախատեսված են 18 տարեկանից բարձր քրոնիկ հիվանդների, 18-54 տարեկան բուժաշխատողների, սոցիալական խնամքի կենտրոնների բնակիչների եւ աշխատակիցների համար: Իսկ «AstraZeneca»-ով եւ «CoronaVac»-ով պատվաստումները կարող են իրականացվել 18 եւ բարձր տարիքի անձանց շրջանում՝ դիմելիության, կամավորության սկզբունքով:

Հանրապետությունում պատվաստումներն անվճար են եւ իրականացվում են միայն կամավորության սկզբունքով:

## ՀՈՒՆԻՍԻ 22-Ը՝ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

***80 տարի առաջ, 1941 թվականի հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրուժ հարձակվեց Խորհրդային Միության վրա: 1418 օրուգիշեր տեւած Հայրենական մեծ պատերազմում զոհվեց խորհրդային ավելի քան 27 միլիոն քաղաքացի: Մեծ Հայրենականում անգնահատելի է Հայաստանի ու հայ ժողովրդի դերը: Շուրջ 600 հազար հայեր մասնակցել են պատերազմին, 300 հազարը՝ զոհվել, ավելի քան 100 Խորհրդային Միության հերոս, մարշալներ, ծովակալներ...: Հունիսի 22-ին, Հայաստանի պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վաղարշակ Հարությունյանը, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի եւ Բելառուսի դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների, բարձրաստիճան սպաների ուղեկցությամբ, այցելեց Հաղթանակի զբոսայգի, ծաղկեպսակներ դրեց Անմար կրակի մոտ՝ հարգանքի տուրք մատուցելով Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հիշատակին: Այնուհետեւ նրանք այցելեցին Վետերանների միություն՝ հանդիպեցին եւ երախտիք հայտնեցին հաղթանակը կերտած վետերաններին:***

## ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՊԵՏԵՐԸ ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՑ

***Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրերով պաշտոններից ազատվել են Հայաստանի զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորքերի պետ Արմեն Վարդանյանը եւ ինժեներական զորքերի պետ Իշխան Մաթեւոսյանը:***

## ՎԵՑ ԱՄՍՈՎ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

***Հայաստանի կառավարությունը եւս 6 ամսով երկարաձգեց թուրքական ծագման ապրանքների Հայաստան ներմուծման արգելքը:***

***Ըստ նախագծի հիմնավորման, թուրքական ծագման ապրանքների ներմուծման արգելքով ոչ միայն տնտեսական բնույթի սանկցիա է կիրառվում Թուրքիայի նկատմամբ, այլեւ անվտանգության տեսանկյունից դադարեցվում է հայաստանյան աղբյուրներից Թուրքիայի պետական գանձարանի ֆինանսական սնուցումը:***

***Նախագծի նպատակն է՝ կանխարգելել ապրանքների ներմուծման միջոցով պարարտեսակ վտանգների ներթափանցումը:***

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

## ԱՄՐԱԳՈՏԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԴԱՌՆՈՒՄ ՆԱԵՎ ՀԵՏԵՎԻ ՆՍՏԱՏԵՂԻԻ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Հնարավոր է, որ մոտ ժամանակներում Վրաստանում պարտադիր դառնա ավտոմեքենայի հետեւի նստատեղիի ուղեւորի ամրագոտի կապելը:*



Օրինագիծը, որը նշանակում է «ճանապարհային անվտանգության կանոնների խստացում», վերջերս խորհրդարան ներկայացրեց քաղաքացի Դավիթ Մեբաղիշվիլին:

Նման նախաձեռնությամբ հանես գալու պատճառը ընկերոջ ընտանիքում պատահած ողբերգությունն էր, երբ ավտովթարի հետեւանքով մահացավ նրա 11 ամյա երեխան: Ըստ նրա, եթե մեքենայի հետեւում նույնպես ամրագոտի կապեն, ապա առավել պաշտպանված կլինեն:

Ըստ Մեբաղիշվիլու օրինագծի, ամրագոտին պետք է առհասարակ պարտադիր դառնա ինչպես առջեւի, այնպես էլ` հետեւի ուղեւորի համար: Նրա առաջարկությունը վերաբերում է միայն թեթեւ մարդատար ավտոմեքնաներին:

Բյուրոն հարցի քննարկումը հանձնարարել է իրավաբանական հարցերի հանձնաժողովին: Օրինագծի վերաբերյալ խորհրդարանում կարծիքները տարբեր են:

Իրավաբանական հարցերի հանձնաժողովի անդամները որոշում կընդունեն միայն փաստարկները լսելուց հետո, որոնք պետք է ունենան շատ հստակ հիմնավորում:

Պատգամավորներից մի քանիսն էլ գտնում են, որ այս օրենքը պետք է ընդունվեր դեռ այն ժամանակ, երբ ամրագոտի կապելը պարտադիր դարձավ մեքենայի առջեւում նստող ուղեւորի համար:

ԵՎՐՈ - 2020




## ԽՄԲԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՆ ԱՎԱՐՏՎԵՑ. ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՎԱԿՈԽԵՑ ՎՃՌՈՐՈՇ ՓՈՒԼ

*Հունիսի 23-ին եզրագիծը հատեց ֆուտբոլի Եվրոպայի առաջնության խմբային մրցաշարը: Այսօր` հունիսի 26-ին, մեկնարկում է առաջնության մեկ ութերորդ եզրափակիչը:*

Առաջնության մեկնարկին վեց խմբերի բաժանված 24 հավաքականներից, մեկ ութերորդ եզրափակչի ուղեգիր ստացան խմբերում առաջին երկու տեղերը գրաված թիմերը եւ խմբային մրցաշարում, համեմատաբար, լավագույն արդյունքների հասած եւ երրորդ տեղերը զբաղեցրած չորս հավաքականները:

Ստորեւ ներկայացնում ենք Եվրոպայի ֆուտբոլի 16-րդ առաջնության մեկ ութերորդ եզրափակչին մասնակից զույգերի, հանդիպման անցկացման ամսաթիվն ու ժամը:

Այսպիսով, հունիսի 26-ին պայքարի մեջ կմտնեն Ուելս-Դանիա (ժամը 20:00-ին), Իտալիա-Ավստրիա (ժամը 23:00-ին) թիմերը:

Հունիսի 27-ին Նիդերլանդները կմրցի Չեխիայի (ժամը 20:00-ին), Բելգիան` Պորտուգալիայի (ժամը 23:00-ին) հետ:

Հունիսի 28-ին Խորվաթիան` Իսպանիայի (ժամը 20:00-ին), իսկ Ֆրանսիան` Շվեյցարիայի (ժամը 23:00-ին) հետ:

Հունիսի 29-ին Անգլիան կխաղա Գերմանիայի (ժամը 20:00), Շվեդիան` Ուկրաինայի (ժամը 23:00-ին) հետ:

ԿՐԹԱԿԱՆ

## ՀՈՒՆԻՍԻ 21-ԻՆ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԱՏԵՍՏԱՏՆԵՐԻ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ




*Վրաստանի արդարադատության նախարարության, ՀԻԻԱ պետական սպասարկումների զարգացման գործակալությունը, հունիսի 21-ից սկսեց շնորհել լիարժեք ընդհանուր կրթությունը հաստատող պետական փաստաթուղթը` ատեստատը:*

Պետական սպասարկումների զարգացման գործակալության տեղեկությամբ, դիմորդները, առանց նախնական ամրագրման, կկարողանան դիմել Արդարադատության տներ, համայնքային կենտրոն եւ Պետական ծառայությունների զարգացման գործակալության մասնաճյուղեր, ամբողջական ընդհանուր կրթությունը հավաստող պետական փաստաթուղթը ստանալու համար:

«Շրջանավարտների ամբողջական ընդհանուր կրթությունը հավաստող պատրաստի փաստաթուղթը` ատեստատը, կկարողանան անվճար ստանալ դիմումը ներկայացնելուց 10 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստաթղթն արագացված կարգով ստանալու ցանկություն ունենալու դեպքում սահմանվում է համապատասխան վճար: Հավաստագրի համար հնարավոր է դիմել առանց տուրք վճարելու մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը:

Ատեստատը, հնարավոր է ստանալ ինչպես նյութական, այնպես էլ` էլեկտրոնային ձեւով:

Պատրաստ ատեստատը նյութական ձեւով կարելի է վերցնել` Արդարադատության տան մասնաճյուղերում, Հանրային ծառայության զարգացման գործակալության համայնքային կենտրոններում եւ տարածքային գրասենյակներում, ինչպես նաեւ փոստով` դիմորդի կողմից նշված հասցեով:

Էլեկտրոնային ատեստատը բնօրինակ փաստաթղթի պատճենն է, որը էլեկտրոնային փաստաթուղթ է` բնօրինակի հավասար իրավական ուժով: Շահագրգիռ անձը, նյութական փաստաթուղթը պատրաստելուց հետո, ցանկացած պահի կարող է ներբեռնել էլեկտրոնային վկայականը էլեկտրոնային հարթակից (my.gov.ge)` օգտագործելով հայտի համարը եւ գաղտնագիրը` հայտը ներկայացնելիս իրեն տրված հուշաթղթում: Դիմորդը կարող է օգտագործել էլեկտրոնային վկայականը` անկախ այն բանից, վերցրել է, թե ոչ կենտրոններից պատրաստի փաստաթուղթը:

Բացի այդ, ցանկացած շահագրգիռ անձ կարող է ստուգել վկայականի էլեկտրոնային պատճենի իսկությունը my.gov.ge էլեկտրոնային հարթակում էլեկտրոնային վկայականի վրա նշված անհատական համարի միջոցով»,- ասված է ծառայությունների զարգացման գործակալության հաղորդագրության մեջ:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Բանակռիվ, վիճաբանություն: 9.Դերասան Էդուարդ ...: 10.Կատարածու: 11.Իրագործում: 13.Զբոսայգի, ճեմայգի: 16.Մաշկի վարակիչ ախտ: 17.Զգացմունք: 19.Թուրքի տղա (ժող.): 22.Ամերիկացի երգչուհի, դերասանուհի ... Հյուսթոն: 24.Կենտրոնական Ասիայի հնագույն քաղաքներից (Ուզբեկստան): 25.Իտալացի ֆուտբոլիստ Անդրեա ...: 27.Նետ պահելու աման: 29.Փրկել, ազատագրել: 32.Ամսվա անուն: 33.Եփը պակաս: 35.Խոտաբույս, համեմունք: 37.Այծի ու ոչխարի մորթու մշակումով պատրաստվող նուրբ կաշի, սաֆյան: 39.Տիբեթի պատմական մայրաքաղաքը: 40.... ցնդել (վերանալ): 43.Հիվանդություն, խոց: 44.Անգլիացի գրող Թոմաս ... Ռիդ: 47.Քաղաք Ֆրանսիայում: 49.Չեխ կինոռեժիսոր եւ սցենարիստ Օտակար ...: 50.Երկաթյա կամարակապ ամենամեծ կամուրջներից մեկն աշխարհում` Հարբոր ... (Սիդնեյ): 53.Վրացի երգչուհի եւ մոդել ... Փացացիա: 54.Վրացական դեղագործական ընկերություն: 55.Հրահեղուկ զանգված: 57.Անհիմն, անիմաստ: 58.Թղթախաղի խաղաթուղթ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Գրելու համար գործածվող ներկանյութի լուծույթ: 2.Հայ կոմպոզիտոր Էդգար ...: 3.Եթովպիական կայսերական տիտղոս մինչեւ միապետության տապալումը 1975 թ.: 4.Կենդանական եւ բուսական մարմինների հյուսվածքներում պարունակվող եւ ջրում չլուծվող յուղային նյութ: 5.Քիմիական տարր, դեղնականաչավուն թունավոր գազ: 6.Ոչխարի մարմնի ճարպային մասը: 8.Սեխմել, տրորել: 12.Խմորեղեն: 14.Զվարթ, երջանիկ: 15.Ճաշատեսակ: 18.Ֆրանսիացի աշխարհահռչակ դիզայներ Քրիստիան ...: 19.Ֆրանսիայի կայսրուհի Մարիա ... Ավստրիացի (1791-1847թթ.): 20.Մարտ մղելու ունակ: 21.Գերմանացի փիլիսոփա, Մարքսիզմի հիմնադիր ... Մարքս: 23.Իղձ, ցանկություն: 26.Լճի եզրը: 28.Տարվա 12 հատվածներից յուրաքանչյուրը: 29.Գետ Արեւելյան Վրաստանում: 30.Սիրտ չունեցող: 31.Գետ ՌԴ-ում: 34.Բնակարանի բաժանմունք: 36.Ողջ, լրիվ (ժող.): 38.Հունգար բանաստեղծ Էնդրե ...: 41.Վայրի ավանակ: 42.Հայոց թագավոր Բագրատունիների արքայատոհմից` ... II Տիեզերակալ: 45.Մարդու մարմնի հեղուկը, որը կատարում է պաշտպանական եւ նյութափոխանակության ֆունկցիաներ: 46.Պակաս, քիչ: 48.Դանիացի ֆիզիկոս ... Բոր: 51.Հրեա ջազային երգիչ ... Բոնոմո: 52.Ալյուրից թխած ամենօրյա ուտելիք: 56.Անգլիացի գրող Իվլին ...:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Աջիկա: 4.Խաթաբալա: 11.Ջալալ: 12.Առնոլդ: 15.Թարմ: 16.Իրկուտսկ: 18.Դար: 19.Խանի: 20.Արծաթ: 22.Սեն: 23.Տրե: 24.Նալ: 26.Լոր: 28.Ապա: 30.Վուշ: 32.Ելուստ: 35.Սանա: 37.Ավշար: 38.Հենրի: 39.Եվա: 40.Լի: 41.Պելե: 42.Սաբա: 43.Ինկ: 45.Իլիկ: 47.Աղմուկ: 50.Ողորկ: 52.Լուվր: 54.Մագնիտ: 55.Հոտաղ: 56.Երկիր: 57.Արատ: 58.Սամբա: 62.Տղմուտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ջոնի: 3.Կալկաթա: 4.Խարխխել: 5.Ալ: 6.Թաք: 8.Ալմաստ: 9.Ամաղլեբա: 10.Գագրա: 13.Որդան: 14.Դուր: 17.Կանոն: 21.Ռոպե: 25.Լատվիա: 27.Սունելի: 29.Ալմաստ: 30.Վահե: 31.Շանել: 33.Սալբի: 34.Տավիղ: 36.Չերչիլ: 41.Պկու: 44.Նման: 46.Կոկորդ: 47.Աքաղաղ: 48.Կոտե: 49.Արոտ: 51.Ոսկոր: 53.Վհատ: 54.Մաստ: 59.ՄՄ: 60.Բու: 61.Ատ:

Գլխավոր խմբագիր` ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ` ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու` ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը` ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն` Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445